Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրի **«Ձեռներեցություն» և «Գործարար հաղորդակցություն»** մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների մրցույթ:

Մասնագիտական մոդուլ	**Ժամերը**
Ձեռներեցություն	376
Գործարար հաղորդակցման հմտություն	72
Ընդամենը թափուր ժամեր	**448**

բ) *Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ*

Բարձրագույն կրթության՝ «Կառավարում» կամ «Շուկայագիտություն (Մարքեթինգ)» մասնագիտություններով կառավարման մագիստրոսի կամ բակալավրի որակավորում, բարձրագույն կրթության «Կառավարում», «Կառավարումը սոցիալական ոլորտում», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Հակաճգնաժամային կառավարում», «Շուկայաբանություն (Մարքեթինգ)», «Կոմերցիա», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)», «Աշխատանքի տնտեսագիտություն» կամ «Բիզնեսի կազմակերպում (Մենեջմենթ)» մասնագիտություններով կառավարման, կոմերցիայի կամ տնտեսագիտության մագիստրոսի կամ բակալավրի կամ ինտեգրված կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական որակավորում, միջին մասնագիտական կրթության «Մենեջմենթ (Կառավարում)» կամ «Շուկայաբանություն» մասնագիտությունների կրթական ծրագրով համապատասխան մասնագետի որակավորում: Հատուկ մասնագիտական դասընթացներ վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը և/կամ գիտական աստիճանը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2024 թվականի դեկտեմբերի 27-ից 2025 թվականի հունվարի 15-ը ներառյալ***, բացի ոչ աշխատանքային տոն օրերից, շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00-ը:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 401 աշխատասենյակ:

Մրցույթը տեղի կունենա ***2025 թվականի հունվարի 20-ին, ժամը 11:00-ին***, հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք: